«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Այգուտ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հայտարարում է մրցույթ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Այգուտ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Ֆիզիկա» և «մաթեմատիկա» առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Հաղթող ճանաչված մասնակցի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր անորոշ ժամկետով:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն թափուր տեղի անվանումը, որին հավակնում է /Ձև 1/,
2. Փաստաթուղթ /դիպլոմ/՝«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան՝ որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները/ դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3×4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկը: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2020 թվականի հունիսի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:
   Մրցույթը տեղի կունենա 2020 թվականի հունիսի 26-ին ժամը՝ 14:00-ից, ՀՀ Գեղարքունիքի մարզի Այգուտ գյուղի միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, գ. Այգուտ:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (093) 018158 հեռախոսահամարով: